

Շրջանակի մեջ վերցրու՛ առաջադրանքների ճիշտ պատասխանները:

1. Գտի՛ր այն թիվը, որը համապատասխանում է 3 հազարյակ + 7 հարյուրյակ + 2 միավոր:
 - 1) 3072
 - 2) 3702
 - 3) 3720
 - 4) 7302

2. Որքանո՞վ կմեծանա եռանիշ թիվը, եթե նրա գրությանը ձախից կցագրենք 8 թվանշանը:
 - 1) 8000-ով
 - 2) 800-ով
 - 3) 1000-ով
 - 4) 8000 անգամ

3. Ինչպե՞ս կփոխվի երկու թվերի տարբերությունը, եթե նվազելին և հանելին միաժամանակ մեծացնենք 38-ով:
 - 1) կմեծանա 38-ով
 - 2) կփոքրանա 76-ով
 - 3) կփոքրանա 38-ով
 - 4) կմնա անփոփոխ

4. Ընտրի՛ր տրված թվանշաններից այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս անհավասարություն. 8 կմ 3 մ $<$ 8 կմ * դմ
 - 1) 30
 - 2) 20
 - 3) 10
 - 4) 50

5. Ընտրի՛ր այն շարքը, որտեղ թվերը դասավորված են աճման կարգով:

- 1) 34621, 28976, 8951, 4767
- 2) 4767, 8951, 28976, 34621
- 3) 4767, 28976, 8951, 34621
- 4) 4767, 8951, 34621, 28976

6. Թվի $\frac{3}{4}$ մասը հավասար է 197-ի: Ինչի՞նչ է հավասար այդ թիվը:

- 1) 49
- 2) 788
- 3) 394
- 4) 591

7. Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է 7 տ 5 ց 9 կգ-ը կիլոգրամներով:

- 1) 7590 կգ
- 2) 7905 կգ
- 3) 7509 կգ
- 4) 7950 կգ


8. Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է 5 ժ 40 ր-ն րոպեներով:

- 1) 540 ր
- 2) 304 ր
- 3) 405 ր
- 4) 340 ր


9. Քառակուսու պարագիծը 116 սմ է: Գտի՛ր քառակուսու կողմի երկարությունը:

1. 29 սմ
2. 58 սմ
3. 19 սմ
4. 38 սմ


5. Ո՞ր գծապատկերում է $5/12$ մասը ներկված:




1)



2)



3)



4)

6. Բեկյալի կողմերի երկարություններն են՝ 23 սմ, 18 սմ, 7 սմ, 19 սմ և 20 սմ: Գտի՛ր այդ բեկյալի երկարությունը:

Պատ.՝ սմ:

7. Կազմի՛ր արտահայտություն և հաշվի՛ր դրա արժեքը: 117-ը փոքրացրու՛ 39-ով և մեծացրու՛ 4 անգամ:

Պատ.՝ :

8. Կռահի՛ր օրինաչափությունը և ավելացրու՛ ևս մեկ թիվ:

13, 12, 14, 11, 15, 10, 16,